ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

N 09/21/208-15

«20» 01 2015թ.

Ինֆորմացիայի ազատության
կենտրոնի իրավաբան
Գ. Հայրապետյանին

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան ՀՀ տրանսպորտի և կապի նախարարին հասցեագրված Ձեր 14/01/2015թ. թիվ 237-ի 4 հարցման՝ տեղեկացնում ենք.

1. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 17/07/2014թ. թիվ 290-Ա հրամանի 3-րդ կետով տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձի գործառույթների իրականացումը վերապահվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի հասարակության հետ կապերի բաժնին: Նույն հրամանի 5-րդ կետի համաձայն՝ բաժնի պետը հանդիսանում է տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ:

2. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի հասարակության հետ կապերի բաժնի պետն է Սասուն Մամյանը (Հեռ.՝ (010)59-01-40, էլ. փոստ՝ press@mtc.am):

3. Տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձի մասին տեղեկատվությունը 2014թ. հուլիսի 17-ից հրապարակված է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պաշտոնական կայքում: Այն դիտելու համար կարող եք սեղմել նաև հետևյալ հղումը. http://www.mtc.am/main.php?lang=1&page_id=605:

4. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 17/07/2014թ. թիվ 290-Ա հրամանը ևս 2014թ. հուլիսի 17-ից հրապարակված է նախարարության պաշտոնական կայքում: Հղումը կցվում է՝ http://www.mtc.am/edfiles/files/Hramanner/290A.pdf:

Հարգանքով՝

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Նալբանդյան 28 Հեռ.՝ (374 10) 59 00 09, Ֆաքս՝ (374 10) 52 38 62, էլ. փոստ՝ staff@mtc.am